ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 05.06.2025 թ. կայացած նիստի թիվ 14 արձանագրություն

Օրակարգ՝ Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, բ.գ.թ.Մարգարիտ Հրանտի Ապրեսյանի՝ նույն ամբիոնի վարիչի պաշտոնում վերընտրություն:

Լսեցին՝ Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, բ.գ.թ.Մարգարիտ Հրանտի Ապրեսյանի՝ նույն ամբիոնի վարիչի պաշտոնում վերընտրվելու հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Մ. Ապրեսյանը ներկայացրեց ամբիոնի ղեկավարման ծրագիրը և նշեց, որ ամբիոնը շարունակելու է արդյունավետ կրթական, ուսումնական ու հետազոտական գործունեությունը:

Մ. Ապրեսյանը ներկայացրեց նշյալ աշխատանքների նկարագիրը, որ ներառում է անգլերենի դասավանդման, ուսուցման ու լայն առումով՝ բարձրագույն կրթության որակի բարելավմանն ուղղված գործունեությունը: Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնում կշարունակվեն ուսումնական ու գիտական գծով աշխատանքները, որոնք կիրականացվեն կրթագիտական գործունեության չափանիշներին համապատասխան:

Ս.Գասպարյանը, Ռ.Ղազարյանը, Ա. Սեդրակյանը և Ա. Ոսկանյանը բարձր գնահատեցին Մ. Ապրեսյանի մարդկային նկարագիրն ու մասնագիտական գործունեության արդյունքները:

Որոշեցին՝ Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 29, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը Մարգարիտ Հրանտի Ապրեսյանին անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

05.06.2025 թ.